

Նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և միաժամանակ շինարարության թույլտվության ստացման

ԴԻՄՈՒՄ

ՀՀ կառավարության 19.03.2015թ. հ.596-Ն որոշում, N 2 հավելվածի N 2-1 ձևով

Դիմումին կցվում են՝

Անձնագրի պատճեն ֆիզիկական անձի դեպքում, պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճեն իրավաբանական անձի դեպքում, շինարարության թույլտվության (իսկ ՀՀ կառավարության 19.03.2015թ. հ.596-Ն որոշման կարգի 116-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև քանդման թույլտվության) համար օրենքով սահմանված տեղական տուրքը վճարելու մասին անդորրագիրը (անդորրագրերը), նախագծային փաստաթղթերը, փորձաքննության դրական եզրակացությունը (եզրակացությունները) կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի գրավոր երաշխավորագիրը, ինչպես նաև N 2-1 ձևով նշված ձևաթղթում ներկայացված այլ տեղեկություններ:

- դիմումը ստանալու օրվանից՝
- 1) II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների համար՝ ա. 3-օրյա ժամկետում՝ բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ սերտիֆիկացված նախագծերի տեղակայման դեպքում, բ. 5-օրյա ժամկետում՝ «ա» կետով չնշված օբյեկտների դեպքում.
- 2) 10-օրյա ժամկետում՝ III ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների դեպքում.
- 3) 15-օրյա ժամկետում՝ IV ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների դեպքում:

Հասարակության իրազեկում պահանջող դեպքերում՝ սույն կարգի 100-րդ կետում նշված ժամկետներին գումարվում է ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակության ներկայացուցիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» N 660 որոշմամբ նախատեսված ժամկետը՝ 15 օր:

Դիտողություններով վերադարձված և դրանք հաշվի առնելով լրամշակված նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են, և դրանց հիման վրա տրվում է շինարարության թույլտվություն՝ սույն կարգի 100-րդ կետով սահմանված ժամկետներում:

Ի Ր Ա Վ Ա Կ Ա Ն Ա Կ Տ Ե Ր՝

- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք.
- ՀՀ կառավարության 19.03.2015թ. հ.596-Ն որոշում.
- ՀՀ կառավարության 28.10.1998թ. «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակության ներկայացուցիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» հ.660 որոշում.

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

- Նոր կառուցվող շենքերի, շինությունների համար շինարարության թույլտվությամբ սահմանվում է շինարարության ավարտի ժամկետ՝ ըստ հայցվող ժամկետի, բայց ոչ ավելի նախագծային փաստաթղթերում նախատեսված ժամկետների՝ 1.5-ապատիկից: Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի դեպքում շինարարության թույլտվությամբ կառուցապատողի հայեցողությամբ, սահմանվում է նաև շահագործման թույլտվության ձևակերպման ժամկետը:
- Գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման և բարեկարգման աշխատանքների համար թույլտվությունը տրվում է նախագծային փաստաթղթերով սովյալ օբյեկտի շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) տևողության նորմերով հաշվարկված ժամկետով:
- Համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015 թ. հ.596-Ն որոշման N1 հավելվածի 135-րդ կետի, նույն հավելվածի 129-րդ և 133-րդ կետերով սահմանված դրույթների խախտումներից յուրաքանչյուրը կառուցապատողի կողմից թույլ տալը հիմք է շինարարության թույլտվության գործողությունն Երևանի քաղաքապետի համապատասխան որոշմամբ կասեցնելու համար:
- Շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) թույլտվության տրամադրման օրվանից շինարարության տևողության ժամանակահատվածի կեսը (սակայն ոչ պակաս, քան մեկուկես տարին) լրանալու ժամկետում շինարարական աշխատանքներ չսկսելու դեպքում կառուցապատողը պարտավոր է դիմել իրավասու մարմին՝ կառուցապատման և տեխնիկական պայմանների հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ տվյալներ ստանալու, դրանց փոփոխման արդյունքում լրամշակված նախագծային փաստաթղթերը սահմանված կարգով համաձայնեցնելու և սույն կարգին համապատասխան նոր թույլտվություն ստանալու համար:
- Շինարարական աշխատանքներ չսկսելու դեպքում, մինչև սույն ծանոթության 4-րդ կետով սահմանված ժամկետը լրանալը, կառուցապատողի կողմից ներկայացված դիմումի հիման վրա կամ դիմում չներկայացվելու դեպքում, իրավասու մարմնի նախաձեռնությամբ, շինարարության թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում՝ դրա մասին պատշաճ կարգով ծանուցելով կառուցապատողին:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉԵՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Ե, ԻՆՏԵՆՍԻՎ ԴԵՊՐԵՍՈՒՄ

- 1) նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում նախագծման թույլտվությամբ (առաջադրանքով) սահմանված պայմաններին (այդ թվում՝ տեխնիկական) և սահմանափակումներին կամ դրանց կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներին.
- 2) դիմումին կից ներկայացված փաստաթղթերը և ձևաթղթում նշված տվյալները պարունակում են ոչ հավաստի կամ ոչ լիարժեք տեղեկություններ, կամ 5-օրյա ժամկետում ներկայացված փաստաթղթերի ցանկը չի համալրվել.
- 3) նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և շինարարության թույլտվության տրամադրման մասին դիմումը ներկայացվել է նախագծման թույլտվության (առաջադրանքի) գործողության ժամկետը լրանալուց հետո.
- 4) նախագծման թույլտվություն (առաջադրանք) չպահանջվող դեպքերում՝ ա. նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում հաստատված գոտևորման նախագծով սահմանված պահանջներին, բ. թեև ներկայացված դիմումում նշվել է ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցման կամ ծառայությունների մատուցման փոփոխության անհրաժեշտության բացակայության մասին, սակայն դրանք անհրաժեշտ են.
- 5) եթե մերժվում է քանդման (ապամոնտաժման) թույլտվությունը կամ եթե չի ներկայացվել օրենքով սահմանված տեղական տուրքի վճարման անդորրագիրը (անդորրագրերը).
- 6) նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը չեն համապատասխանում քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի գերատեսչական ակտերով սահմանված պահանջներին.
- 7) դիմումով շինարարության իրականացման համար հայցվող ժամկետը 1.5-ից ավելի անգամ գերազանցում է նախագծով նախատեսված շինարարության տևողության նորմերով հաշվարկված ժամկետը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Կառուցապատողը կարող է համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարել մերժված հայտում ներկայացված փաստաթղթերում և կրկին հայտ ներկայացնել իրավասու մարմին: